ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/22 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
10	ՔՊ ձմեռային երկարաթև սվիտեր	Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի	Ծանոթություն-տվյալ ապրանքը մակնիշ չունի	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	10. Սվիտր ձմեռային ՔՊ՝ Գործվածքը 100% ակրիլե NM-28/2 մինչև NM-35/2 մանվածքից, մակերեսային խտությունը՝ առնվազն 350 գրամ/մ2, գույնը՝ կանաչ (խակի), գործվածքի տեսակը՝ «Half Milano»՝ գործված 5gg-7gg դասի մեքենայով Արտաքին տեսքը՝ ուղիղ ձևածքով, երկարաթև, կլոր օձիքով, վզամասը մշակված էլաստիկ մանժետով: Սվիտերի ստորին վերջավորությունը և թևքերի բազկակալները ավարտվում են 6+/-0.5սմ լայնության էլաստիկ 1/1 գործվածքատեսակով: Սվիտերի

						ուսամասերը և թևքերի արմնկամասերը վրակարված են առնվազն 220 գրամ մակերեսային խտությամբ, մուգ փիրուզագույն կտորից վրադիրներով: Ուսերին մշակված են 5սմ լայնքով և 16սմ երկարությամբ ուսադիրներ, որոնք ուսամասերի հետ կոճկվում են 12-15 մմ տրամագծով մետաղյա կոճակ-սեղմակով: Առաջամասի ձախ կողմում կարված է վրադիր գրպան՝ առնվազն 220 գրամ մակերեսային խտությամբ, մուգ փիրուզագույն կտորից, 12+/-1սմ լայնությամբ, 13+/-1սմ երկարությամբ, 12-15 մմ տրամագծով մետաղյա կոճակ-սեղմակով կոճկվող կափույրով: Գրպանի կենտրոնում՝ ստորին եզրակարից 2սմ բարձրության վրա ասեղնագործված է ՀՀ ԱԻՆ խորհրդանշանը՝ շրջանաձև, 8սմ տրամագծով: Տարբերանշանները - Աջ թևքին՝ ուսագլխից 8սմ ներքև՝ ՓԾ թևքի տարբերանշանը, ձախ թևքին՝ ուսամասից 3 սմ ներքև, ՀՀ եռագույնը ուղղանկյուն՝ ներքևում գրված «ՀԱՅԱՍՏԱՆ», որից 1 սմ ներքև ասեղնագործված է ՀՀ ԱԻՆ խորհրդանշանը, որն ամրացվում է

						կպչուն ժապավենով: Պիտակները-Սվիտերի ներսի միացման կարի մեջ ներկարվում է ստուգիչ պիտակ՝ ներառող՝ Արտադրողի անվանումը, չափ-հասակը, լվացքի մեքենայով կամ ձեռքով լվանալու ջրի ջերմաստիճանը, «Լվանալ գունավոր հագուստի համար նախատեսված լվացքի նյութերով», «Պարզաջրել գոլ ջրով, Չարդուկել», «Պիտակը չհեռացնել»: Կոչման տարբերանշանն իրենցից ներկայացնում է 7Х5սմ չափերով հանովի օղագոտի՝ առնվազն 220 գրամ մակերեսային խտությամբ, մուգ փիրուզագույն կտորից: Թույլատրելի շեղումը՝ +/- 2%: Սպայական կազմի ուսադիրների աստղերը ասեղնագործված են 13մմ և 20մմ տրամագծերով: Գնդապետ, փոխգնդապետ, մայոր – 20մմ-ոց աստղեր.Կապիտան, ավագ լեյտենանտ, լեյտենանտ, ավագ ենթասպա, ենթասպա 13մմ-ոց: Աստղերը տեղակայվում են հետևյալ կերպ՝ • Գնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը՝ 25մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ

					աստղը՝ 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: • Փոխգնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի: • Մայոր – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղի կենտրոնը՝ 45մմ: • Կապիտան – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը՝ 20մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը՝ 20մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից, չորրորդ աստղը՝ 20մմ հեռավորության վրա՝ երրորդի կենտրոնից: • Ավագ լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը՝ 25մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը՝ 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: • Լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը՝ 25մմ հեռավորության վրա երկու աստղ իրար կողքի: • Ավագ ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը՝ 20մմ, երկրորդ աստղը՝ 20մմ

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/22 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
10					
					հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից, երրորդ աստղը՝ 20մմ հեռավորության վրա երկրորդ աստղի կենտրոնից: • Ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը՝ 25մմ, երկրորդ աստղը՝ 25մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից: • Ավագ - տարբերանշանի մեջտեղով՝ վերին և ստորին եզրերից 5-ական մմ հեռավորության վրա կարվում է բաց շագանակագույն /բեժ/ գույնի 12մմ լայնությամբ մեկ ժապավեն՝ ուղղահայց դիրքով: • Ավագ սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա կարվում է բաց շագանակագույն /բեժ/ գույնի 12մմ լայնությամբ մեկ ժապավեն՝ հորիզոնական դիրքով: • Սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, ասեղնագործվում են 5մմ լայնությամբ երեք ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: • Կրտսեր

					սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, ասեղնագործվում են 5մմ լայնությամբ երկու ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Սվիտերների չափսերը և տարբերանշանների քանակներն ըստ կոչումների կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Փաթեթավորումը՝ պիտակավորված պարկերով, ամեն պարկում 10 հատ, յուրաքանչյուր սվիտեր թափանցիկ պոլիէթիլենային տոպրակում: Պիտակի վրա նշված՝ տեսականու անվանումը, չափը, քանակը, արտադրող կազմակերպության անվանումը: